

# **ԱՅԳԱԼՈՅՍՈՂ ԿԵՆՐԱՆԱՐԱՐ ԽՕՍՔԸ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ Է**

- 1. Քու Խօսքիդ համար Պիտի նետենք  
Ուռկանները:**
- 2. Աստուածայայտնութեան Երեւոյթը  
Չերբնապանին Երեւումը:**
- 3. Աստուած Այցելութեան Եկած է Իր  
Ժողովուրդին Բարութեամբ:**
- 4. "Ով է Արդեօք Ասիկայ":**
- 5. Բանին Զօրութիւնը**

## **VITAL AND ENERGETIC WORDS OF JESUS CHRIST**

**ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ**

**ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ**

**2003**

# ՔՈՒ ԽՕՍՔԻԳ ՀԱՄԱՐ ՊԻՏԻ ՆԵՏԵՆՔ ՈՒՌԿԱՆՆԵՐԸ

Ղուկ. Ե.5:

Յիսուսի խօսքին մէջ կայ զօրութիւն, ուժ, ազդեցութիւն և ներգործութիւն: Մարդկային կեանքը կ'արտայայտուի խորհուրդով, խօսքով և գործով: Ասոնց առնչութիւնը շատ սերտ է: խօսքն ու գործը խորհուրդէն կը ծնին: *Խորհուրդը* կը կանխէ *խօսքն ու գործերը*, ամէն արարք գործ ըլլալէ առաջ *խօսք է*, և խօսքով արտայայտուելէ առաջ *խորհուրդ* է: Խորհուրդն է մարդուն բուն էութիւնը: Բարի խորհուրդին ակնադիւրը Աստուած է՝ «Մի է Բարին որ է Աստուած», բարութեան Կատարելութիւնը:

Գործը խորհուրդին պակն է: Առանց *գործի*, կնիքին՝ խորհուրդն ու խօսքը անպտուղ կը մնան: Գործը իրագործուած խորհուրդն է, տեսանելի մտածումը: Կեանքը *խորհիլ, խօսիլ և գործել է*: խօսքի պատճառով է որ մարդ կը կոչուի բանաւոր արարած: «Աստուծոյ Խօսքը լսելի եղաւ Ջաֆարիայի որդի Յովհաննէսին, անապատի մէջ»--Ղուկ. 4.2: Հրեայ՝ Աղեֆսան-դրիացի Ֆայլո-ի համար, "խօսք"ը *Լոկոս* ոչ թէ Աստուած էր, այլ՝ Անկէ անջատ ինքնութիւն էր և ստեղծագործող զօրութիւն:

Յուլիոս կայսրին ուղղարկաց խօսքը խորհրդարանին. «*Եկայ, տեսայ, յաղթեցի*» էր: Իսկ, Յիսուս Քրիստոսի խօսքը եղաւ.

**«Եկայ, սիրեցի, զոհուեցայ»:**

Խօսքը լեզուի հասարարական գործառնութիւններու մտածողութեան ու մտքերու հաղորդակցութեան միջոցներու իրականացումը և դրսեւորումն է:

Նախա-Քրիստոս 5-րդ դարուն. "խօսք" բառը, Յունարէն "Լոկոս", Եփեսացի Հերագլիթիսի միջոցաւ իմաստասիրական գործածութեան դրուեցաւ բացատրելու համար սիեզերական սկզբունքը: Յիսուս Քրիստոս՝ Իր Յարութեամբ ապացուց թէ վերջին յաղթականը մահը չէ, այլ՝ Իր *խօսքն* է: Յիսուս անմարմին խօսքը մարմնի ջրջելով անջօջափելին տեսանելի ու ջօջափելի դարձուց Իր սիրով, հրաջֆներով, և ի վերջոյ Իր Մարմնական Յարութեամբ:

Աստուածաբաններ կը հետաքրքրուին Աստուածաշունչի գրականութեան վերաբերեալ հարցերով և հեղինակներով ոչ Աւետարանին պատգամովը: Յիսուս Ինքզինք կը կոչէ "Աստուծոյ Խօսք"ը, **"Բանն Աստուծոյ"**, ոչ թէ **զօրութիւն մը**, այլ իմաստա-

ւորող և ապրող Մեկնաբանութիւնը և Բացատրութիւնը Աստուծոյ: Ոչ թէ ո՞վ գրած է Ս. Գիրքը, այլ ո՞վ **յայտնաբանած** է զԱստուած: Յիսուս Զրիստոս ապրեցաւ որպէս կենդանի՝ Աստուածայայտնութիւն և հայելացումը սէր Աստուծոյ: Մոռնալու չենք որ Աստուած միայն մէկ խօսք ունի, և այդ խօսքը գիրք մը չէ, այլ Յիսուս Զրիստոսի **ապրումի՛ն** բացատրումը: Յիսուսի խօսքերը ծաղրուեցան, Անոր դիմագիծը ձաղկուեցաւ, Անունը ուրացուեցաւ, հետեւորդները հալածուեցան, բայց Անոր խօսքերը մնացին մշտահունչ և յաւերժաբարբառ: Խաչին վրայ Յիսուսի խօսքերէն առաջին երեքը ներումի և սիրոյ խօսքեր էին, յաջորդ երկուքը տագնապի և տառապանքի, վերջին երկուքը՝ գոհութեան և յաղթանակի:

Առաքեալներու համար անհրաժեշտ էր ունենալ Յիսուս Զրիստոսի *խօսքերը* և *գործերը*: որպէս վկայութիւն: Երբ եկաւ Սուրբ Հոգին, առաքեալները եղան համակ հաւատք, Բաջութիւն, ճանաչում, **խօսք** (վկայութիւն) և սէր: Զրիստոսի խօսքերը մեկնաբանուելու են ներկայ մտածումի: Մեկնաբանելու և բացատրելու դժուարութիւնը մեր տգիտութեան, ծուլութեան և նախապաշարումին հետեւանքներն են: Մարմնին ճրագը հոգեկան մտածումն է. երբ անձի մը մտային խորհրդածութիւնը առողջ է՝ ամբողջ մարմինը լուսաւոր կ'ըլլայ, իսկ երբ հոգեկան տեսանելիութիւնը սկար է՝ (նախապաշարեալ), մարմինն ալ խաւար կ'ըլլայ»: Բարոյական ոչ մէկ ախտանիշ չի կրնար համեմատուիլ այն ժխտական տարրին հետ, որ կը կոչուի նախապաշարում:

Անաստուածները աւելի *փաստ և բացատրութիւն* կը փնտրեն կամ կը հետապնդեն, Բան թէ *յայտնութիւնն*, *ապացոյց* և *վկայութիւնն*: Ես գոհացուցիչ կերպով համոզուած եմ, թէ կա՛յ ապացոյց և վկայութիւն Աստուծոյ գոյութեան, սակայն սոյն հարցումին էութեան ու գոյացութեան համար *գիտակա՛ն* փաստ մը չունիմ: Ինչո՞ւ, որովհետեւ Աստուած գիտական փաստարկութենէ գերազանց է՝ Transcendent:

Յովհաննու Աւետարանը ոչ թէ առաքելական վկայութիւն մըն է պատմագրական, այլ՝ պատմութենէն *անդին*, առաքելական գրաւակա՛նը և ստուգութիւնը Յիսուս Զրիստոսի պատմութեան: Աւետարանը ո՛չ թէ կենսագրութիւնն է Յիսուս Զրիստոսի, այլ հաւատքի վկայութիւնն ու յայտարարութիւնը:

Զրիստոնեային կեանքը և վկայութիւնը աստուածակեդրոն է Բրիստոսահայեաց ըմբռնումով, ան կը խօսի ու կ'ապրի ա՛յն հաւատքով ու ա՛յն Աստուծով, որ յայտնուեցաւ Յիսուս Զրիստոսի

ապրումով ու Սուրբ Հոգւոյն վկայութեամբ: Հինգ հոգի նոյն դաջնակին վրայ կը նուագեն սակայն միայն մէկ նուագողին երաժշտութիւնը կը յուզէ ներկաներուն սիրտը: Նոյնն է նաեւ Բրիտանացի մը կեանքի վկայութիւնը: Զրիստոնեան տառապանքի առջեւ կենսուրախ ու վհատութեան փոխարէն կորովամիտ ըլլալու է իր կոչմանը մէջ: Յուսահատութիւնն ու վհատութիւնը զարկին մեր հոգւոյն դուռը, բայց մենք չբացինք ու մերժեցինք իրենց հրաւերը:

**Յունիս 19, 2001**

**Թորոնթօ**

# ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՅԹԸ

## ԳԵՐԲՆԱԿԱՆԻՆ ԵՐԵՒՈՒՄԸ

Աստուած Իր յայտնութիւնը շնորհած է ոչ միայն Մովսէսի և Հին Կտակարանի մարգարէներուն, այլ համաշխարհի բոլոր կրօնաւոր առաջնորդներուն եւս: Ինչո՞ւ, որովհետեւ աշխարհի բոլոր կրօնները մարդ արարածը կ'առաջնորդէին ոչ թէ անասուածութեան, և ոչ նչապաշտութեան, այլ դէպի գերբնական Արարիչ աստուծոյ մը: Միթէ կա՞յ մարդկային պատմութեան մէջ ընկերութիւն մը, որքան ալ անցեալին պատկանող, որ չհաւատայ աստուծոյ մը, և չերկրպագեր գերբնական Արարիչի մը, զանազան ձեւերով և ծեսերով, որքան ալ նախնական կարծեմք զիրենք: Ուստի, ուրկէ՞ և ինչպէ՞ս և ե՞րբ մարդ արարած "Աստուած" բառը հնարած է ու գործածել սկսած:

Աստուած գոյ է իւրաքանչիւր մարդ էակին մէջ, որքան ալ այդ էակը հողաշէն ու հնադարեան եղած ըլլայ: Մարդ արարածը արարչագործութիւնն է Արարի՛չ Աստուծոյն: Ան, կոյր և անգիտակից բարեջրջութեան մը արդիւնքը չէ՛: Անասուածութիւնն ու բարեջրջութեան տեսութիւնը, կոյր ու անգիտակից, եսակեդրուն և ամբարտաւան տիտղոսակիր մարդոց տեսութիւնն է, ու անոնց ուսման Ֆրէտրիք Նիցչէ իմաստասէրն է 18-րդ դարուն:

Յիսուս Քրիստոս կրապաշտութեան դէմ չ'արտայայտուեցաւ, բայց վայեր կարդաց Մովսէսի *հաւորա, տիտղոսաւոր և կեղծաւոր* աջակերտներուն՝ Փարիսեցիներուն: Յիսուսի Սուրբ Մնունըը շնորհաւորողները եղան նախ համեստ հովիւները, ու յետոյ Արեւելէ՛ն եկող Մոֆերը, որոնք Հրեաներու կողմէ, ճանչցուած էին որպէս "հեթանոս կրապաշտներ": Հին Կտակարանի աստուածաբան կարծուածներէն ո՛չ ոք ունեցաւ հետաքրքրութիւնը ընկերանալու և հետեւելու հեթանոս մոգերուն, տեսնելու ու երկրպագելու իրենց Մարդեղացեալ Մեսիան՝ Աստուած Որդին:

Ո՞ւր էին Հրեայ վարդապետները (Ռաբբի"ները, որոնք ուղղութիւն տուին հեթանոս մոգերուն, սակայն իրենք չեկան: Ո՞ւր էին Հին Կտակարանի մասնագէտները՝ Փարիսեցիներն ու Մադուկեցիները, որոնք տեսան Յիսուսի հրաշագործութիւնները և լսեցին աստուածաբարբառ Բարոզներն ու սրտաբուխ առակները Յիսուս Վարդապետին, սակայն չխոնարհեցան:

Հին Կտակարանի հաւատացող Մովսէսի աջակերտներուն Յիսուս ըսաւ. Պէտք է ձեզի *տորէ՛ն ծնանիլ*, այսինքն երկինքէ՛ն

Ժնանիլ: Որովհետև

***Ես եմ Ճշմարտութիւնը, Ճամբան և Կեանքը:***

Որ կը նշանակէ. թողուլ հինգած Մովսէսի Օրէնքն ու մարգարէներու ազգայնամոլ հրահանգները ու հետեւիլ Աստուծոյ արքայութեան Աւետարանին: Յիսուս, Մարդեղեալ Ճշմարտութիւնը, Աւետարանի մէջբերումներուն մէջ կ'ըսէ աշխարհի մարդոց.

***«Օրէնքն ու Մարգարէները մինչեւ Յովհաննէ՛ս (Մկրտիչ) գոյութիւն ունէին, անկէ յետոյ կը ֆարոգուի Աստուծոյ արքայութիւնը»--Ղուկ. ԺԶ.16:***

Վերոյիշեալ Աւետարանի մէջբերումով, մեր Տէրը Յիսուս քսել կ'ուզէ թէ, նոր դարաշրջան մը բացուած է մարդոց առջեւ որ կը կոչուի "Աստուծոյ Թագաւորութեան Աւետարանը և Ինքը անոր ռահվիրայ ֆարոգիչ Մարգարէն է: Հին Կտակարանը գոյութիւն ունեցաւ մինչեւ Յովհաննէս Մկրտիչ:

Մինչեւ Յովհաննէս Մկրտիչի օրերը, մարդկութիւնը չկրցաւ ճանչնալ Աստուած Ճշմարիտը: Թէ՛ հեթանոսներ և թէ՛ Մովսէսի հետեւողները սխալ բացատրեցին զԱստուած: Հին Կտակարանը ներկայացուց զԱստուած որպէս "նախանձոտ և վրէժխնդիր": Այսինքն ազգայնամոլ և միայն չրեաները սիրող Աստուած մը: Ու մինչեւ այսօր այդպէս կը հաւատայ Իսրայէլի ժողովուրդը ու նաեւ բազմաթիւ Զրիստոնեաներ ալ, որոնք Աւետարանները չեն սերտած: Մինչդէռ իրե՛նք (չրեաները) դարձան խաչողները և սպաննողները իրենց Մեսիան՝ Յիսուս Զրիստոսը: Իսկ հեթանոսները ներկայացուցին զԱստուած որպէս իմաստասիրութեան տեսութիւն մը, կամ ֆարէ ու մետաղէ շինուած մարդակերպ կամ գազանակերպ անասուն:

Աստուած Ճշմարիտը ազգային իւրացում մը չէ՛ որ չրեայ ազգը առանձնաջնորհեալ սէպէ: Յիսուս Ի՛նք կ'ըսէ. «Վասնզի Աստուած այնպէս սիրեց ***աշխարհը***, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդին տուաւ»--Յով.Գ.16: Ճշմարիտ աստուած ճանաչումը Յիսուսի ֆարոգութեամբ և Անոր ապրումնով յայտնուեցաւ համայն աշխարհի: Ոչ Հին Կտակարանը կարդալով, ոչ հեթանոս իմաստասիրութիւնը ուսումնասիրելով, ու ո՛չ ալ իրենց զաւակները շինծու կուրճերու գոհագործելով: Մարդիկ ճանչցան Աստուած Ճշմարիտը Յիսուս Զրիստոսի Մարդեղացումով և Անո՛ր յայտնութեամբ:

Յիսուս Ի՛նք, Իր հարազատ աղօթքին մէջ կ'ըսէ. ***«Այս է յախտեմական կեանքը, որ ճանչնան Էնզ միակ Ճշմարիտ Աստուած, և ճանչնան Յիսուս Զրիստոսը, զոր Եւն ողկեցիր»--Յով. ԺԷ.3:***

Բոլոր նախա-Քրիստոս մարգարէները կ'ըսէին. "Տէր Աստուած այսպէս ըսաւ": Յիսուս եղաւ Աստուծոյ Ճշմարիտ Պատգամաւորը որ սկսաւ ըսել. **«Ե՛ս կ'ըսեմ ձեզի»:** Մեր Տէրը Յիսուս Ի՛նքն էր ճշմարիտ Վկան որ ճշմարտապէս և իրաւամբ ներկայացուց Աստուած Ճշմարիտը մարդ արարածներուն առանց ազգային գանազանութեան խտրութեան և ոչ ալ իմաստասիրական բառախաղութեամբ և ո՛չ ալ ոսկեգանդակ կուտներով:

Երե՛ք տարի, Յիսուս Իր աշակերտները դաստիարակելէ յետոյ կ'ըսէ անոնց (Հրեայ աւանդապահներուն) որոնց համար Մովսէս և երկա մարգարէները գերագոյն աստուածայայտ դեսպաններն էին:

**«Ես եմ Ճանապարհը, Ճշմարտութիւնը և Կեանքը:**  
**Ոչ ոք Հօրը կու գայ, եթէ ոչ՝ Ինձմով: Եթէ**  
**Ճանչնայի՛ք Ձիս՝ պիտի ճանչնայի՛ք նաեւ Հայրս»:**  
**--Յով. ԺԴ.6:**

Աշխարհի մէջ միակ ազգը, որ հպարտ էր իր մարգարէներով և կրօնական (Հին Կտակարանի) ծէսերով, Հրեայ ժողովուրդն էր: Յիսուս, ակնարկելով այս ազգին կ'ըսէ. "Մի հպարտանա՛ք որ դուք առանձնաշնորհեալ էք: Ձեր հաւատացածները մոռցէ՛ք, որովհետեւ **«Ես եմ Ճանապարհը, Ճշմարտութիւնը և Կեանքը»:** Ե՛ս եմ որ իջայ երկինքէն, ձեր սորվածը և աւանդութիւնները, ճշմարտութիւններ չեն: Դուք պարտաւոր էք *վերստին ծնիլ* կրօնագիտական և հաւատագիտութեան մէջ որպէսզի ստանա՛ք յաւիտենական կեանք: Վերոյիջեալ երկնաքարքառ Յիսուսի խօսքերը ակնարկուած են նաեւ մեզի Հայ ազգին հազարեօթհարիւրամեակին արթիւ:

Այսպիսի հզօր խօսքերուն չդիմացող ազգայնամոլ աշակերտներէն ոմանք բաժնուելով 12 աշակերտներէն, թողուցին Յիսուսը և հեռացան: Ազգայնամոլ և Հին Կտակարանը լաւ մը ուսումնասիրած վարդապետ Սողոս, դարձաւ ոխերիմ թջնամին ու հալածողը Յիսուսի Եկեղեցիին: Սողոս կարդալով հանդերձ Հին Կտակարանի Օրէնքն ու մարգարէները, չկրցաւ ճանչնալ Աստուած Ճշմարիտը, որովհետեւ **Օրէնքը Մովսէսի միջոցով, Իսկ ջնորհն ու Ճշմարտութիւնը Յիսուս Զրիստոսի միջոցով եղան,** կ'ըսէ Յովհաննէս արաբեալ --Յով. Ա.17:

Յիսուս Զրիստոսի մարդկութեան բերած Աւետարանը՝ Բարի լուրը պէտք էր իբր առանցին, ինքնայատուկ գիրք մը հրատարակուէր, առանց միացնելու զայն Հին Կտակարանին: Այդպէսով, իւրաքանչիւրը պիտի ունենար ի՛ր որոջ արժէքը, յարգը և գնահատանքը: Մինչդէռ ներկայիս այնպէս կը կարծուի, թէ Յիսուսի

Աւետարանը շարունակութիւնն է Հին Կտակարանին ու երկուքն ալ Աստուածաշունչ կամ Holy Bible կը կոչուին: Յիսուս Զրիստոս Հին Կտակարանին որեւէ հոմանիշ չտուաւ, այլ՝ զայն կոչեց **“գիրքերը”**:

1. Յիսուս « գիրքը գոցելով՝ տուաւ պաշտօնեային ու նստաւ--Ղուկ. Դ.20:
2. Յիսուս ըսաւ. «Գրուածքներուն մէջ բնաւ չէ՞ք կարդացած--Մատթ. ԻԱ.42:

Նախ քան տպագիր հրատարակութիւնները, Ս. Գրային բոլոր գրութիւնները մագաղաթներու վրայ ձեռագրուած ինքնաշատուկ գալարածեւ ամբողջականութիւններ էին: Կարելի չէր բոլոր Հին Կտակարանը կամ բոլոր Նոր Կտակարանը մէկ ամփոփ ձեռագիր մագաղաթի վրայ ունենալ: Տպագրական մեքենայի հնարումով ձեռագիր գրութիւնները ամփոփուեցան ու մէջտեղ եկան որպէս մէկ գիրք: Անգլիոյ մէջ, երբ Ս. Գիրքը թարգմանուիլ սկսաւ, ճոն Ուիլիք (1320-1384)-ին թարգմանեց մի միայն Նոր Կտակարանը Լատիներէնէ Անգլերէնի:

Ուիլիամ Թինտէլը յունարէն Նոր Կտակարանը (1526)-ին թարգմանեց Անգլերէնի, աստորութեան մէջ, որովհետեւ Կաթողիկ Անգլիոյ եկեղեցին արգիլած էր ժողովուրդին, որ իրենց լեզուով Ս. Գիրքը չկարդացուի: Ու եկեղեցին Ուիլիամ Թինտէլը ցիցի կապեց ու զինք կրակի բոցերու մէջ ողջ-ողջ այրեց: Մինչ Հայոց թագաւորը Վրամշապուհ և Մահակ կաթողիկոս դիմաւորելու գացին Մեսրոպ Մաշտոցը, թարգմանած ըլլալուն համար Աստուածաշունչը Հայերէն լեզուի...:

Նոյնիսկ Յիսուս Զրիստոսի Մարդեղացումէն առաջ Եսայի մարգարէն կը բննադատէ Մովսէսի կողմէ պատուիրուած արջառներու զոհագործութիւնը, ըսելով.

«Տէրը այսպէս կ'ըսէ. *«Ես ասոյ պիտի նայիմ, այսինքն՝ ն խոնարհին և կտորած հոգի ու նեցուղին ու իմ խօսէն դողացողին: Արջառ մորթողը մարդ մեռցնողի պէս է, Գառնուկ զոհողը ջուր մորթողի պէս, նա էր մատուցանողը խոզի արիւ ն մատուցանողի պէս, Կնարուկ ծխողը կուռք պաշտողի պէս, Իրաւ զրնէ անոնք իրենց ճամբաները փնտռեցին, Ին անոնց հոգիները իրենց գարջելիներէն կ'ախորժին: Ես ալ անոնց թշուառութիւնները պիտի բնտրեմ, Ես իրենց վախցած բաները իրենց վրայ պիտի բերեմ. Վասնզի կանչեցի ու պատասխան տուող չեղաւ, Խօսեցայ ու մտիկ չըրին, Հապա իմ առջեւ չարութիւն և քրիւն, Ես իմ չհաւ նա՞ծս բնտրեցիւն»--Եսայ. 66.2-4:*

Հետեւեալ (ներշնչումի) դէպք իրողութիւն որ պատահեցաւ

Պետրոսի և Յիսուսի միջև Փիլիպպեան Կեսարիոյ մէջ, կ'արժէ անելի մօտէն ուսումնասիրել: Յիսուս կը հարցնէ Իր աշակերտներուն ըսելով. *«Իսկ դուք իմ մասիս ի՞նչ կ'ըսէք, ո՞վ եմ ես»:* Միմոն Պետրոս պատասխանեց ու ըսաւ. *«Ինչ Բրիստոսն ես՝ կենդանի Աստուծոյ Որդին»:* Յիսուս երանի կու տայ Պետրոսին ու անոր կը յանձնէ երկնքի բանալիները:

«Այնուհետեւ Յիսուս սկսաւ յատկօրէն յայտնել աշակերտներուն, թէ պէտք է որ Ինք երուսաղէմ երթայ, ջատ չարչարաններ կրէ քահանայապետներէն, դպիրներէն, ժողովուրդի ծերերէն և սպանուի ու երրորդ օրը յարութիւն առնէ: Եւ Պետրոս մէկ կողմ տանելով Ջայն՝ սկսաւ վիճիլ Անոր հետ ու ըսել. «Զա՛ւ լիցի քեզ, Տէ՛ր, այդ բանը քեզի չի պատահիր»: Եւ Յիսուս դառնալով պետրոսին՝ ըսաւ. *«Ետի՛ս գնա՛յ, Աստանա՛յ,* դուն գայթակղութիւն ես Ինձի համար, որովհետեւ բու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն, այլ՝ մարդոց»--Մատթ. ԺԶ.21-23:

Վերոյիշեալ ամփոփ ու խտացեալ դէպք իրողութեան մէջ կը տեսնուի մարդկային ներշնչումի տկարութիւնը: Մարդ արարած ստանալով յանդերձ աստուածային ներշնչում, կրնայ նաեւ զայն խառնակել, իր նախապաշարումին պատճառով ու շփոթիլ իր մտքին մէջ: Յիսուս, Պետրոսը «երանի՞» կոչեց, ու նաեւ «Մատանայ»: Մենք պարտաւոր չե՛նք բոլոր մարգարէները անսխալական նկատել: Անսխալականն ու իրա՛ւ ճշմարիտը միայն Յիսուս Ի՛նքն է Որդի՛ն Աստուծոյ, մարդ արարածներուն համար, Ան ըսաւ.

*«Ես եմ ճշմարտութիւնը, ճամբան ու Կեանքը»:*

Յիսուս Բրիստոս գիրք մը, գրութիւն մը չէ՛, այլ կենդանի՛ և ապրո՛ղ Անձնաւորութիւն: Մեր պաշտամունքը, հաւատքը և ծառայութիւնը ըլլալու չէ՛ անցողակի գաղափարի մը կամ յարաբերական տեսութիւններու արդիւնք: Յիսուս Բրիստոս մեզի համար Աստուածոյ Մարմնացած ու Մարդացած Որդին է: Յիսուս Իր Ա. Խաչելութեամբ ո՛չ թէ Իր Անձը կը յանձնէ կամ կը մատնէ մահուան, այլ՝ Իր պատգամած ու յայտնած Աստուծոյ սէրն ու ճշմարտութիւնը վկայելու պայքարամարտին մէջ կ'սպաննուի: Այս արարքը ցոյց կու տայ Իր հաւատարմութիւնը աստուածային առաքելութեան:

Յիսուս բացառապէս կ'ըսէ Յովհաննու Ժ.17-19 համարներուն մէջ՝

*«Իմ Հայրս զիս կը սիրէ անոր համար որ ես իմ կեանքս կու*

*տամ, որպէսզի կրկրին արևն զայն: Այ ո՛ր ինձմէ կը խլէ զայն, այլ ես ինձս կը տամ զայն: Իշխանութիւն ու նիւմ զայն տալու և իշխանութիւն ու նիւմ վերստին զայն արևելու: այս պատուէրը իմ էօրմէն տաքայր:*

Մեր հայեացքը երբ կեդրոնացնենք Քրիստոսի վրայ, հոն չենք հանդիպիր "մեղմ ու փափկասուն Յիսուսի" մը, այլ հզոր Անձնաւորութեան, որ կը ցնցէ՝ ու կը թոթուէ մեզ որպէսզի մեր էութենէն արտաքսէ սխալ կարծիքները մեր չաստուածներուն՝ (իմ նպատակներո՛ւս աստուածը, իմ ըմբռնումի՛ս աստուածը, իմ փորձառութեանս աստուածը, իմ հանգիստի՛ս աստուածը, իմ յաջողութեանս աստուածը, և ի՛մ ազգիս աստուածը): Մենք կրնանք *հրապուրուի՛լ* Իրմով կամ *մերժե՛լ* ա՛յս Յիսուսը, հետեւի՛լ Իրեն, կամ ձեռք բաշել ու հեռանալ Անկէ:

Այս մասին խորապէս և բացայայտօրէն Յովհաննէս առաքեալ իր խոր ծերութեան մէջ կը գրէ ու կը կտակէ յաւերժութեան իր ճանչցած Յիսուսի Աւետարանը նոյնիսկ 20րդ դարու մարդկութեան ու կ'ըսէ. «Ան (Յիսուս) սկիզբէն Աստուծոյ բով էր: Ամէն բան Անով եղաւ, և առանց Անոր չեղաւ բան մը, որ եղած ըլլայ: Կեանքը Անով էր: Եւ կեանքը լոյս էր մարդոց: Եւ Լոյսը կը լուսաւորէ խաւարին մէջ, և խաւարը չճանչցաւ Չայն»--Յով. Ա.2-5: Բոլոր աշխարհ կը հաւատար գերբնական աստուծոյ մը, թէ՛ չրեաները և թէ՛ հեթանոսները իրենց գիտցած ձեւերով և աստուածներով, սակայն իրենց գիտցածը այլասերած աստուած մըն էր ազգայնացած ու սեփականացած աստուած մը:

«Մարդ մը կար՝ Աստուծմէ դրկուած: Անոր անունը Յովհաննէս էր: Ասիկա եկաւ որպէս վկայ, վկայութիւն տալու Լոյսին համար, որպէսզի ամէնքը անոր միջոցով հաւատան: Ինք Լոյսը չէր, այլ եկած էր, որպէսզի վկայէ Լոյսին համար»--Յով. Ա.6-8:

Հին Առակարանի մարգարէներուն համար որեւէ նախակարապետ վկայ մը չէր եկած: Յիսուսի գալուստը վկայելու համար մարգարէացուած էր չրեայ մարգարէներու կողմէ, և թէ Հռոմայեցի Վիրկիլիոս Բանաստեղծին կողմէ (The Eclogues, Georgics and Aeneid of Virgil--page 18-20:

Յովհաննէս առաքեալ կը շարունակէ իր վկայութիւնը ու կ'ըսէ.

«Ան էր ճշմարիտ Լոյսը, որ կը լուսաւորէ ամէն մարդ, որ աշխարհ պիտի գայ: Ան աշխարհի մէջ էր, և աշխարհը Անով եղաւ, սակայն աշխարհը չճանչցաւ Չայն: Իրեններուն եկաւ, բայց իրենները չընդունեցին զԱյն: Իսկ անոնք որ ընդունեցին զԱյն՝ իշխանութիւն տուաւ անոնց ըլլալու Աստուծոյ որդիները, անոնց՝

որոնք կը հաւատան Իր Անունին: Անոնք ո՛չ արիւնէ, ո՛չ մարմնի կամքէ և ո՛չ ալ մարդու կամքէն, այլ Աստուծէ ծնան»--Յով. Ա.9-13:

Յիսուս աշխարհի մէջ էր Իր մարդեղացումէն առաջ: Իր մարդեղացումէն յետոյ ալ մարդոց մէջն է, այնպէս ինչպէս եմմաուսի ճամբորդները, սակայն Ձինք օտարականի տեղ դրած ենք:

Յիսուս եկաւ իրեններուն, բայց իրեններն ալ (Իր ազգակիցներն ալ՝ իրենք զիրենք առանձնաշնորհեալ կարծողներն ալ չընդունեցին Ջայն: Ի՞նչ ակտուսանք, այն ազգը որ դարերով սպասած էր Անոր յայտնութիւնը տեսնելու համար Երկնային Օծեալը, անոնք եւս թէ՛ չճանչցան և թէ՛ չընդունեցին Ձինք:

Ինչո՞ւ համար թէ՛ աշխարհ (հեթանոսներ) և թէ՛ իրենները (չրեաները) չընդունեցին աստուածառաք Ճշմարտութիւնը որ եկած էր շնորհելու յաւիտենական կեանք ու յայտնաբանելու Աստուած Ճշմարտը:

Մարդիկ դարձած էին այնքա՛ն ինքնահաւան և անձնամոլ, որ չուզեցին խոնարհիլ բացարձակ Ճշմարտութեան առջեւ, ու ջանացին ինքնախաբեութեամբ իրենք զիրենք աստուած կարծել: Մարդկային ինքնախաբեութիւնն ու գոռոզութիւնը այնքա՛ն մեծ է, որ Յիսուս ընդունուեցաւ հզօր ու բանգէտներու կողմէ երբ միայն 12 տարեկան երախայ մըն էր: Ա՛յսօր ալ երբ մարդիկ կ'աղօթեն Աստուծոյ, անոնք կ'աղօթեն սուրբ Մարիամ մօր զիրկը նստած մանկան մը, ու ոչ հզօր ու յարուցեալ յաղթական Յիսուս Բրիստոսի:

Մարդեղացեալ Յիսուս Բրիստոս, Որդին Աստուծոյ երբ սկսաւ Իր առաքելութեան ու ներկայացաւ մարդաշխարհին որպէս ճանապարհ, Ճշմարտութիւն և Կեանք, Ան չերեցաւ ոչ որպէս մանուկ մը կամ պատանի մը, այլ՝ չափահասութեան հասած, շուկայի մէջ թրծուած, մարդոցմէ ճանչցուած և մարդկային փորձութիւններն ու դառնութիւնները ճաջակած աշխարհական մը: Ան Իր Մարդեղութեան փորձառութեամբ լրի՛ւ և անթերի կերպով ճանչցաւ մարդկային տկարութիւնները, ապիկարութիւնները և հանդիսացաւ մարդոց Բարեխօսը առ Աստուած:

Յիսուսի ախարհ գալէն յետոյ, չրեաները Աստուծոյ առանձնաշնորհեալ ազգը ըլլալէ դադրեցան, որովհետեւ անոնք ո՛չ թէ միայն ուրացան իրենց Մեսիան, այլ նոյնիսկ մահուան դատապարտեցին իրենց դրկուած Ազատարարը: Յիսուսի Մարդեղացումէն յետոյ, յաւիտենական կեանքի դուռը բացուեցաւ համա՛յն աշխարհի (Հարսանեկան իրախճանքը Մատթ. ԻԲ.1-14): Ուր Յիսուս Ինք կը բացատրէ առակը և կ'ըսէ.

**«Արդ, գացէ՛ք ճամբաներուն գլուխը և  
ով որ գանձէ՛ր կանչեցէ՛ք հարսանիքի»:**

Առաջինները պիտի ըլլան յետինները և յետինները առաջին:  
Հայերը առաջին ազգն էին որ ազգովին դարձան Բրիտանոսի  
հաւատքին: Ո՞ւր կը գտնուի այսօր Հայ ազգը: **Ընթերցողները**  
թող վկայեն:

«Եւ Բանը մարմին եղաւ ու բնակեցաւ մեր մէջ, և մենք  
տեսանք Անոր փառքը, որպէս շնորհով և ճշմարտութեամբ լի  
Միածնի փառք՝ ստացուած Հօրմէն»--Յով. Ա.14:

Առաքեալները, որոնք Համաշխարհի քարոզիչները դարձան,  
չտեսան Յիսուսը որպէս ծծկեր մանուկ մը նստած մօր մը գիրկը,  
այլ անոնք տեսան Յարուցեալ և Յաղթակա՛ն Յիսուսը: Յիսուս  
Բրիտանոս ներկայացաւ աշխարհի որպէս հզօր գերմարդկային  
Անձնաւորութիւն մը, որուն հրեղէն խօսքերուն և իմաստութեան,  
մարդկային իմաստասերներ չկրցին դէմ կենալ: Կրօնաւոր  
աստուածաբան կարծուած ռաբբիներ պապանցեցան, և քահանայա-  
պետներ նախանձեցան այս աշխարհական աստուածաբարբառ  
Քարոզիչին, ու միակ միջոցը որ գտան, սպաննել էր Զայն ու  
հողարկել կենդանի ճշմարտութիւնը առանց գիտնալու, որ Անոր  
իւրաքանչիւր աշակերտը պիտի դարձար Յիսուսանման խիզախ  
քարոզիչ մը:

Եթէ մէկը կ'ուզէ տեսնել Մարդեղեալ Յիսուսը փառաւորուած  
Հօր Աստուծմէ, պարտաւոր է ընդունիլ Յիսուս Բրիտանոսը և  
բնակեցնել Զայն ոչ թէ փայտէ կամ մետաղէ շրջանակի մը մէջ  
միայն, այլ իր Հոգւոյն ու սրտին մէջ, իր մտածումներուն և սիրոյ՝  
ապրումին մէջ: Այսինքն այնքա՛ն սիրել ու հաւատալ Անոր, որ  
պարտաւոր դառնայ ինքզինք նոյնացնել Անոր չարչարաններուն և  
անարգանքներուն հետ այս աշխարհի մէջ: "Նոյնացնել" բառը  
Յիսուսի հետեւիլ կը նշանակէ մինչեւ Գողգոթա:

Յովհաննէս առաքեալ կը շարունակէ ու կ'ըսէ. «Մենք ամէնքս  
Անոր լիութենէն ստացանք շնորհ՝ շնորհի փոխարէն (այսինքն մենք  
բոլորս ալ օրհնուեցանք Անոր գերազանց շնորհով): Որովհետեւ  
Օրէնքը Մովսէսի միջոցով, իսկ շնորհն ու ճշմարտութիւնը Յիսուս  
Բրիտանոսի միջոցով եղան»--Յով. Ա.16-17: Վերոյիջեալ բախտատու-  
թիւնը որ առաքեալը կ'ընէ Մովսէսի և Յիսուսի միջեւ, կը նշանակէ,  
«Մովսէսի Օրէնքը, առանց ողորմութեան խստապահանջ արդարու-  
թիւն մըն էր, իսկ Յիսուսի մարդկութեան ընծայածը, **Աստուծոյ**  
**սիրոյ ներումն է:**

**«Ոչ ո՛ր երբեք տեսած է զԱստուած, բացի միայն  
Միածին Որդիէն որ Հօրը ծոցին մէջ է Ա՛ն յայտնեց»:**

**--Յով. Ա.18:**

Յովհաննէս առաջեալ վերոյիջեալ յայտարարութիւնը կ'ընէ թէ՛ Հրեաներուն, թէ՛ Յոյներուն և թէ՛ յունախօս չրեաներուն: Ան կ'ըսէ իր ցեղակիցներուն թէ, Հին Կտակարանի մարգարէներէն ո՛չ մէկը **տեսած** էր զԱստուած: Ի՞նչպէս կարելի է, որ անձ մը չտեսած և չճանչցած մէկուն մասին կարենայ ճիշտ և իրաւ վկայութիւն տալ: Ոչ թէ մարգարէները սխալ տեղեկութիւն տուած են Աստուծոյ մասին, այլ իրե՛նք չեն տեսած ու չեն ճանչցած Աստուած և իրենց նկարագրած աստուածը չէ, Ա՛յն որ Յիսուս եկաւ բացատրելու և յայտնելու մարդկութեան:

Ուստի, Աստուծոյ ամբողջական իրականութիւնը և ճշմարտութիւնը ոչ թէ Մովսէս կամ Եղիայ յայտնած են մարդկութեան, այլ՝ Յիսուս, Միածին Որդին, որ Հօր Աստուծոյ ծոցին մէջ է, Ան յայտնեց մեզի:

Հետեւաբար եթէ ես ունիմ կարելիութիւնը ճանչնալու զԱստուած Յիսուսի՛ միջոցաւ, ի՞նչ կարիք ունիմ սորվելու զԱստուած Մովսէսէ կամ ուրիշ մարգարէներէն, որովհետեւ կրնամ ջփոթիլ և սխալ ճանչնալ Աստուած Ճշմարիտը ու կորսնցնել յաւիտենական կեանքը:

**Յունիս 19, 2001**

**Հալիպոլթըն, Օնթերիօ**

# “ԱՍՏՈՒԱԾ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԵԿԱԾ Է ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԲԱՐՈՒԹԵԱՄԲ”

--Ղուկ. Է. 16

Մինչեւ Յիսուս Քրիստոսի Մարդեղութիւնը, մարգարէներ Բարոզած ու յորդորած էին վախճան, օրէնքիւն և պատուէրներուն Աստուածը: Յիսուս Քրիստոսի աշխարհի այցելութեամբ, անտեսանելի և անշօշափելի Աստուած, որ հեռու կը կարծուէր ըլլալ մարդոցմէ, հանդիսացաւ ու ճանչցուեցաւ մարդոց Իր *գլխութեամբ, սիրով և բարերարութեամբ*:

Համայն աշխարհի մարդիկ, ապրած և աշխատած էին, ազատ կամ բռնի այն յոյսով և ակնկալութեամբ, թէ օր մը պիտի հասնի երբ մարդկութիւնը պիտի տեսնէ և ապրի դրախտային կեանք մը: Մոյն յուսադրիչ տեսիլք արժայութեան երանութեան համար, Յովհաննէս Ակրտիչ կը դրկէ իր աշակերտներէն մի Բանի անձերը Յիսուսի և կը հարցնէ հետեւեալը.

**«Դո՛ւն ես որ պիտի գայիր, թէ ուրիշին սպասենք»**

--Ղուկ. Է. 20:

Մարդեղեալ Յիսուսի պատասխանը կ'ըլլայ դրական բայց ոչ ինքնապանծացում: Յիսուս կը պատասխանէ Յովհաննէս Ակրտիչի պատգամաւորներուն ըսելով. *«Գացէ՛ք պատմեցէ՛ք Յովհաննէսին, ինչ որ դուք տեսա՛ք և լսեցի՛ք. թէ կոյրերը կը տեսնեն, կաղերը կը Բալեն, բորոտները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մտնելները յարութիւն կ'առնեն և Անտարանը աղփատներու և կը Բարոզուի: Երանի՛ր անոր որ Իմ պատճառովս իր հաւատքը չի կորսնցնէր»*:

Ի՞նչ է բարին: Բ արդականութեան մէջ գեղեցիկն ու բարին իրար կը հանդիպին ու կը միանան: Յոյները պարկեշտ մարդը *գեղեցիկ և բարի* կը կոչէին: Կեանքն ու պատմութիւնը պայքարն է գեղեցկութեան, յաւիտենական Բարիի և ճշմարտութեան համար: "Բարութիւնը" Աստուծոյ հիմնական ու եզակի յատկանիշն է: Բարի խորհուրդին ակնադրիւրը Աստուած է՝ «Մի է Բարին որ է Աստուած», ***բարութեան Կատարելութիւնը***: Երբ մարդոց "բարի" կ'ըսենք, *յարաբերական* բարին կը հասկնանք: «Ձար մտածումը երբ կատարում է՛ գտներ, չարիք է՛. նոյնպէս բարի մտածումն ալ երբ չ'իրագործուիր, բարիք է՛»: Ա. Ներսէս Ծնորհալին Հանճար ու գիտութիւն չի խնդրեր, այլ բարի կեանք մը ապրելու իմաստութիւնը կը հայցէ Աստուծմէ:

Յիսուսի Երկրորդ Գալուստի ջրջանին ու Բարիի ու չարին

պայթարամարտի ընթացքին, բոլոր նախատարրերային (primordial) աւերածութիւնները՝ երկրաշարժ ու ցամաքափոփոխութիւնները պիտի կրկնուին, որպէսզի "Նոր Երկիր"ը վերադառնայ իր մահո՛ւր նախափճակին: Հին Կտակարանին մէջ երբ Հրեաներ ազգայնացուցին և սեփականացուցին զԱստուած, իրենք զիրենք *առանձնաջնորհեալ* ցեղ մը կարծեցին: Մինչդեռ Յիսուս Իր աշխարհ գալով յայտնեց թէ, Աստուծոյ Հայրութիւնը համա՛յն մարդկութեան էր և թէ համայն աշխարհի: Յիսուս ամենայն Բաջութեամբ վկայեց Հրեաներուն, հեթանոս հարիւրապետի մը հաւատքը ըսելով անոնց.

***«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ Իսրայէլի մէջ  
իսկ այսչափ հաւատք չգտայ»:***  
--Մատթ. Ը.10

Յիսուսով է, որ կը տեսնենք Աստուծոյ համայնապատում **ՍԷՐՆ ՈՒ ԳԹՈՒԹԻՒՆԸ** հանդէպ համա՛յն մարդկութեան: Յովհաննու Աւետարանին մէջ, Աստուած սապէս կարտայայտուի մեր աշխարհի մարդկութեան համար. «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ Անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը»: Յիսուսով առանձնաջնորհեալ ազգ չմնաց աշխարհի վրայ, որովհետեւ Ան Իրեն հրաւիրեց համայն մարդկութիւնը, ըսելով.

*«Եկե՛ք Ինձի, բոլոր յոգնածներ և բեռնաւորուածներ, եւ էս պիտի հանգստացնեմ ձեզ: Իմ լուծս ձեր վրայ առե՛ք և սորվեցե՛ք Ինձմէ, որ հեզ եմ և տրտով խոնարհ. և ձեր անձերուն հանգիստ պիտի գտնե՛ք, որովհետեւ Իմ լուծս Բաղքը է և Իմ բեռս՝ թեթեւ»*.-Մատթ. ԺԱ.26-30:

Եթէ ամենակալ Հայր Աստուած, Արարի՛չն է կանոնական և բարի աշխարհի, ինչո՞ւ գոյութիւն ունի չարը: Այս խորհրդաւոր հարցումին, անմիջական և ամբողջական պատասխան մը չկայ: Արարչագործութիւնը մինչեւ որ հասնի իր *լրումին* չարը գործօն պիտի ըլլայ աշխարհի մէջ:

Որովհետեւ Առակով, Յիսուս բացատրեց, թէ արարչագործութիւնը պիտի հասնի իր լրումին ու ժամանակը պիտի գայ երբ չարը պիտի պարտուի ու այնուհետեւ պիտի սկսի Աստուծոյ արժայութիւնը Անոր անբաւ բարիքներով *այս աշխարհի* վրան--Մատթ. ԺԳ.24-30: Նիւթական բարիքներու զուգահեռ, այժմ կայ նաեւ նիւթական չարիքներ: Հրեշտակներն ու մարդկային արարածներ իրենց ազատ կամֆին պատճառով կը ձգտին կամ չարին և կամ բարիին. նախընտրելին սերն է: Ոմանք կ'ուղուին դէպի կեանք ու ոմանք ալ

կորուստ:

Աստուած որեւէ կերպով պատասխանատուն չէ և չ'արտօներ բարոյական անկումը, մարդ *իր ազատ կամքով* կ'ընտրէ բարին կամ չարը: Ա՛ն, որ կ'ուզէ նկարագրել (ֆարոգել) Բարին, պէտք է Ձայն կրած ըլլայ իր հոգիին մէջ: Երոպայի կրօնական Հաւատաբանութիւնը որ սկսաւ որպէս *հալածական* հերետիկոսներու դէմ 1184-ին, դարձաւ արիւնալի ու անողոք սպանդ ու վերջ գտաւ 1820-ին:

Հերետիկոսները դատելու և պատժելու պաշտօն ունեցող կրօնական ժողովը, աններող և անգութ ժողով մըն էր Հաւատաբանութեան: Ոչինչ բան մը բաւական էր, մէկու մը աղանդաւորութեան մէջ մեղադրելու և այրելու համար: Ղազար Փարպեցիի հակառակորդները զայն հանեցին իր պաշտօնէն մերկ և թշնամանօք, գրկելով զինք իր ամէն ունեցածէն՝ զոր մանկութենէն ի վեր ստացած էր, ու մինչեւ անգամ իր Յունարէն գիրքերը չտուին իրեն, թէեւ իրենք ալ անկարող էին օգուտ փողել անոնցմէ, և այն թանկագին ձեռագիրները կը մնային անկիւն մը նետուած՝ կեր ըլլալու ցեցերուն: Սոյն պատճառով, Յիսուս պատուիրեց աջակերտներուն, ըսելով. *«Զգեցէ՛ք որ երկուքն ալ միասին աճին միմեկե հու նե՛հը»*--Մատթ. ԺԳ.30: Բայց Հաւատաբանական ժողովականները սպաննեցին չարին կողմին՝ նաեւ բարին, անխիղճ վաշխառուին զուգահեռ՝ նաեւ ազնիւն ու անմեղը:

Բարին, ազնիւն ու պատուականը կարելի է խրատել բայց երբեք բռնութեամբ, հարկադրութեամբ կամ ճնշումով կիրարկուելու է: Ճնշումով և պարտադրութեամբ ստեղծուած բարիք մը կը դառնայ անհանդուրժելի և բիրտ իշխանութիւն յար և նման Հաւատաբանութեան:

Քրիստոս կը պատուիրէ, չարին յարթել բարիով, մեր ապրումով, արարներով, մտածումներով, հաւատքով և կամքով: Բարիքին մէջ փանակը և նիւթը մեծ արժեք չունին, սիրտը և ոգին է էականը: *«Աւրեմն թոյլատրելի է շաքաթ օրը բարիք գործել»*--Մատթ. ԺԲ.13: Ոչ մէկ բարիք կրնայ ստացուիլ, առանց աշխատանքի և արդար ֆրոնիքի: Բարիք *ընդաւնդ* բոլորին տրուած է, իսկ բարիք *կատարել*՝ ֆիչերու: *«Բարիքի դէմ բարիք՝ ամէն մարդու գործն է. չարիքի դէմ բարիք՝ ազնիւ մարդու գործ»*:

*«Մարդեղութիւնը կը ճառագայթէ՝ մեր կեանքին մէջ, կը մարմնաւորուի մեր գործերով, կը զարդարուի առաքինութեան գոյնով, կը դրոշմուի բարութեան բնութագիծով և կը պտղաբերուի երջանկութեան բարիքներով»*--Գարեգին Ա. Կաթողիկոս: Քրիստոս Իր ամենախոնարհ ծագումով, Իր օրինակելի բարութեամբ, Իր

օրինակելի համեստութեամբ, Իր օրինակելի զոհաբերութեամբ, և մանաւանդ՝ Իր օրինակելի աղփատութեամբ, ճշմարտապէս քարոզեց և վկայեց Աստուած ճշմարիտը: Արտի մը սրբութիւնը կը ցոյայ միայն ապրուած կեանքի մը բարութեանն ու հեզութեանը մէջ:

«Կրօնք» բառը կը նշանակէ "սրտին հառաչն առ վարագուրեալն Աստուած": Կրօնը տեսիլն է Աստուծոյ բարութեանը, Անոր նկարագրին քաղցրութիւնը, որ ցոյացումն է մարդու հոգւոյն պայծառութեան և բարութեան: Կեանքին միակ իմաստութիւնը՝ **բարութիւն** և **սէր** է: Յիսուս Քրիստոս Ինքն է ջօջափելի Մարմնացումը, երկնային վսեմութիւնը, անկոխելի սրբութիւնը, միակ ճշմարտութիւնը, անմրցելի բարութիւնը, անմատչելի բարձրութիւնը, կեանքի մեծ Լոյսին և աստուածային բարութեան:

Քրիստոնէութիւնը դրական ու գործնական բարութիւն մըն է: Նախ՝ իր այոն այո է ոչը՝ ոչ: Ծիտակին ջիտակ կ'ըսէ, սխալին՝ սխալ, թէ իսկ անհաճոյ ըլլայ այդ՝ մարդոց: տեղին համաձայն, կրնայ ցնցել իր ցուցամատը անիրաւին, անարդարին և կեղծաւորին դէմ: Վերջապէս քրիստոնէայ ըլլալ կը նշանակէ ցոյց տալ խօսքով ու գործով յիմարութիւնը կրապաշտութեան, որուն մէջ թաղուած է ամբողջ 20-րդ հեթանոս դարու աշխարհը:

**Յունիս 20, 2001**  
**Թորոնթօ**

# “Ո՞Վ Է ԱՐԴԵՕՔ ԱՍԻԿԱ”

--Ղուկ. Ը.22-25

«Ո՞Վ է արդեօք Յիսուս»: «Դուք իմ մասին ի՞նչ կ'ըսեք»:

1. «Եթէ Աստուծոյ Որդի ես՝ իջի՛ր այդ խաչէն»:
2. «Ուրիշները ազատեց, ինքզինք չի կրնար ազատել»:
3. «Եթէ յոյսը դրած էր Աստուծոյ վրայ՝ թող Ան հիմա փրկէ զայն, եթէ կ'ուզէ զինքը»:
4. Իսկ հարիւրապետը և անոնք որ Անոր հետ Յիսուսի պահպանութիւն կ'ընէին, երբ տեսան երկրաջարժը և պատահածները՝ սաստիկ վախցան ու ըսին. **«Արդարեւ Աստուծոյ Որդի է սա»:**

Ո՞Վ է Յիսուս Զրիստոս Հայ ազգին համար: «Ս. Գրիգոր

Լուսաւորիչով՝ Նոր խորք ստացաւ Հայ կեանքը, նոր դիմագիծ՝ Հայ ժողովուրդը ու նոր արիացում՝ Հայոց պատմութիւնը»: Ս. Գրիգոր Լուսաւորիչ ըսած է. *«Զրիստոսի ճանապարհը՝ աստուածացման ճանապարհն է»:* Ս. Գրիգոր Լուսաւորիչ տանջանքներու ենթարկուած ժամանակ իսկ, կ'աղօթէր Աստուծոյ, ըսելով. *«Գոհանաւ*

*Տեղմէ, Տէր, որ ինձ՝ անարժանու, արժանի դարձուցիր Ընդ պարգէնիդ, որովհետեւ սկիզբէն իսկ սիրեցիր Բուձեռմէնը...»:* Գրիգոր Պարթեւ պարզ աշխարհական մըն էր, և իրեն հետ ո՛չ քարոզիչ ընկեր ուներ, և ո՛չ գործակից եկեղեցականներու խումբ մը, այսուհանդերձ՝ 301 տարին չվերջացած, Հայաստանի կրօնական կերպարանքը հիմնապէս փոփոխուած էր:

Վարդանաֆը դարձաւ պարծանքն ու յաւիտենականացումը Հայ ժողովուրդին: Վարդանանցը միայն դէպք մը չէ՛, այլ նաեւ պատգամ մը: Աեւոնդ երեց ըսաւ Վարդանանց գացող զինուորներուն.

***«Ամէն մէկդ եկեղեցի մըն էք,  
երբ կ'ապրիք այդ հաւատքը»:***

«Ո՞Վ է արդեօք Ասիկայ»՝ Նոր Սերունդին համար: Նոր սերունդը պիտի չմոռնայ օրօրոցէն սորված Հայերէնը, եթէ մայրերը չթերանան ջարուհակել իրենց սկսած գործը՝ զօրաւոր կամք և համբերատար ոգի ցուցնելով: Ինչո՞ւ նոր սերունդը զանգուածօրէն հեռու կը մնայ եկեղեցիէն: Մեր հաստատութիւնները կը դեկավարուին փառամոլ մեծամիտներու կողմէ: Ներկայ սերունդը «մեղք» բառին վրայ կը ծիծաղի, որովհետեւ զայն սահմանող մեծ խորհուրդը վերցած է: Կարգ մը հոգեբաններ կը ջանան իրե՛նց մարդկայնապաշտ նոր առաքիւնութիւնները պարտադրել նոր սերունդին, ինչպէս միասեռականութիւն, նախաամուսնական կամ

արտամուսնական սեռայնություն:

«Այն ինչ, որ կը հրամցուի որպէս արդիական երաժշտութիւն, կամ կենցաղային վարմունքի այսպէս կոչեցեալ արդիական ու "ազատագրեալ" ընթացք, ունի երիտասարդութիւնը գերող ազդեցութիւն, որ միաժամանակ սպառողական հասարակութեան լարած ծուղակներէն մին է»--Գարեգին Ա. Կաթողիկոս:

Ի՞նչ կ'ըսէ առաքեալը Նոր սերունդին. *«Վերաբարձրէ՛ք՝*

*Աստուծոյ ջնոյսը որ կայ քու մէջը»*. --Բ. Տիմոթէոս երիտասարդին.

Ա.5: Հոգեկա՛ն յափշտակութիւնը կ'անհետացնէ ենթական զգացողական աշխարհի զգաստութենէն: Ծաղուելու ենք մենք զմեզ նոր սերունդին մէջ, շօշափելու ենք ու ջփուելու՛նք անոր հետ: 13րդ դարէն վերադառնալու ենք 20րդ դարը: Խօսելու ենք մե՛ր ժամանակակիցներուն՝ անո՛նց զգացմունքներուն և անոնց զգացա՛ծ ու **հասկցա՛ծ լեզուով**: Անոնց մէ՛ջ և անոնց հե՛տ ապրելու ենք եթէ կ'ուզենք հասնիլ անոնց ականջին ու լսելի ըլլալ անոնց սրտին:

Սիիւնաբնակ եկեղեցին, ազգային ըլլալէ՛ աւելի, դառնալու է Յիսուսի՛ եկեղեցին: Հայց. եկեղեցին Առաքելական ըլլալէ՛ աւելի, դառնալու է աւետարանչական: "Առաքելական" բառը ինքնին աւետարանչական կը նշանակէ: Անոնց համար Հայ լեզուն անխօսելի է, եկեղեցին՝ անհասկնալի, գրականութիւնը՝ անընթեռնելի, պատմութիւնը՝ տաղակալի:

Կը թուի, թէ մեր սուած դաստիարակութիւնը վրիպեցաւ իր նպատակէն, թերեւս ալ տալ ուզեցինք բան մը, **զոր մե՛նք չու նէի նք** և կամ տալու ձեւը չգիտցանք:

1. Նոր երիտասարդները ներգրաւելու մէջ ցաւալիօրէն ձախողած ենք ու նաեւ լրութեան մասնած ենք մեր այս ձախողութիւնը:
2. Զպարծենանք, թէ այսօր ակումբներ, կեդրոններ, եկեղեցիներ հիմնեցինք, այս կառոյցները մեզ աւելի բաժնեցին, քան թէ միացուցին: Որովհետեւ չկարողացանք այդ կառոյցներուն մէջ դնել այն ոգին, ազգային միասնութեան ոգին, որ պիտի հրապուրէր երիտասարդութիւնը ազնիւ, մաքուր ու հասանելի տեսիլքով մը:
3. Էականն ու համայնականը զոհեցինք, մեր փոքրատեսիլ «եասերուն փառամուրթեանը»:

Աստուածաշունչը Նոր սերունդին հետ, նոր լեզուով պէտք է խօսի, Իր յաւիտենական պատգամը արդի մարդուն մտքին ու սրտին հասցնելու համար: Զայն կարելի է կոչել *իմաստային թարգմանութիւն* և:

1. «Այն ինչ, որ կը կոչուի Արեւմտեան Մշակոյթ (Թերեւս աւելի լաւ պիտի ըլլար կոչել կեղծ մշակոյթ, յոյժ աւերիչ ազդեցութիւն ունի նոր սերունդին վրայ, գլխաւորաբար այն պատճառով որ ամբողջ շեշտը կը դնէ լոկ հեշտանփի, գգայարանփներու ցանկութեանց յագեցման վրայ, որ կը սպառնայ հոգեկան ու իմացական գեղեցկութիւններէ դատարկացնելու անհատին կեանք»:
2. Յիսուսի Ձայնը խօսի նոր սերունդին մէջ, արեան ձայնը խօսի իրենց մէջ, պատմութեան և Աւետարանի՞ն ձայնը խօսի իրենց մէջ:

Եկեղեցի եկող բազմաթիւ ծնողներ, այսօր, առանց իրենց զաւակներովը կու գան եկեղեցի: Ինչո՞ւ ասոնց զաւակները չեն գար եկեղեցի, կամ փոխանակ եկեղեցի գալու, ո՞ւր կ'երթան: Ինչո՞ւ չենք կրցած գանձում հրապուրել որ եկեղեցի գան: Գլխաւոր պատճառը մենք Աւետարանին պատգամին իմաստը չենք հասկցած և չենք կրցած դաստիարակել մեր զաւակները Զրիստոսի հաւատքին մէջ: Մենք սորվեցուցած ենք մեր հարագատներուն ջատ քան, սակայն չենք սորվեցուցած մեր հաւատքը: Ինչպէս որ կերակուր եփելը գիտութիւն մըն է, նոյնպէս ալ մեր հաւատքը գիտութիւն մըն է:

Կերակուր կամ անուշեղէն մը եփելու գիրքերը կան և այդ գրութեան հետեւելով կ'եփենք: Նոյնպէս ապրելու գիրքը կայ՝ Յիսուսի Աւետարանը: Մեզմէ Բանի՞ հոգի զայն կարդալով կ'ապրի իր կեանքը: Յիսուս կ'ըսէ.

***յախօճեանկան կեանք ա՛յս է՝ որ ճանչնան  
Ըեզ միակ ճշմարիտ Աստուած, և ճանչնան  
Յիսուս Զրիստոսը, զոր դու ն դրկեցիր:***

--Յով. ԺԷ.3

Աստուծոյ հաւատալէն յետոյ Ձայն ***Ճանչնա՛լ*** մը կայ: "Ճանչնալ" կը նշանակէ "գիտնալ" ու գիտնալ կը նշանակէ "գիտութիւն": Ո՞վ չուզեր գիտութիւն ունենալ: Այսօր աշխարհի բոլո՞ր ճարտարարուեստը գիտութեան արդիւնք է: Այս հաւատքի գիտութիւնը չունենալ նուս համար, մեր զաւակները եկեղեցի չեն գար: Զրիստոնէական հաւատքի կեանքը ապրելէն զատ աւելի մեծ գիտութիւն չկայ աշխարհի վրայ: Յիսուս աշխարհ եկաւ մարդոց ***ապրի՛լ*** սուրվեցնելու համար: Պօղոս արտօնալ սապէս կը բացատրէ մարդկային կեանքը.

*«Ինձի համար ապրիլը Զրիստոս է»--Փիլ. Ա.21:*

Ի՞նչ կը նշանակե *“ապրիլը Զրիստոս է”*: Բացատրութիւն.--  
*«Բոլոր անոնք՝ որ կ'ուզեն աստուածապաշտութեամբ ապրիլ ի Յիսուս Զրիստոս, հալածանքներու մէջ պիտի ըլլան»--Բ. Տիմ. Գ.11:*

*Աինչեւ 50 տարի առաջ հաւատքի գիտութիւնը այսօր  
անհրաժեշտ չէր: Տ-րդ Համաշխարհային Պատերազմէն  
վերջ, հաւատքի և Բրիտանացեան գիտութիւնը անհրաժեշտ-  
ութիւն դարձաւ: Առանց մեր ծնողաց հրամանին  
կերթայինք եկեղեցի: Իսկ այսօր եթէ մեր ծնողները  
ստիպե՛ն իսկ, չենք ուզեր երթալ եկեղեցի:*

*Ինչո՞ւ:*

**Յունիս 22, 2001**

**Թորոնթօ**

# ԲԱՆԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

**Ա**շխարհի մէջ շատ մը զանազան զօրութիւններ կան:

Օրինակ. արեւի զօրութիւնը, ջուրի ուժը, դեղի կամ թոյնի ազդեցութիւնը, նիւթին և հոգիին ներգործութիւնները: Վերոյիշեալ զօրութիւնները կը յայտնաբերուին *իրենց* իւրայատուկ պայմանադրութեամբ միայն:

Դեղն ու թոյնը իրենց ուժ ազդեցութիւնը կը գործեն, երբ ներհնապէս, ստամոքսի միջոցաւ մարմնի բջիջներուն կը հասնին: Ջուրը և արեւը իրենց ելեկտրական զօրութիւնը կ'արտադրեն երբ ջուրը ջրանիւի (turbine) մէջէն կանցնի, և արեւի ճառագայթները լուսաելեկտրական բջիջները (photovoltaic cells) կը գրգռեն:

Հերթուլէսը մարդկային ուժի մարմնացումն էր: Հին Հռոմայեցիները ֆիզիքական ուժի երկրաբազուներն էին: Ուժի մը դիմաց, կամ ներկայութեան, աշխարհ կը վախնայ և կը խոնարհի:

Աչքեր կան, որոնց կ'ակնարկենք "մեռած ձուկի աչքեր", սակայն կան նաեւ աչքեր, որոնց մագնիսական զօրութիւնը Հերթուլէսը և Սամփսոնը կը յաղթահարեն:

Բառին զօրութիւնը՝ ի՞նչպէս կը յայտնաբերուի: Գիտնանք նախ, թէ ի՞նչ է "բառ"ը: "Բառ"ը խօսքի մը բաղկացուցիչ մասն է: Բառ մը "բառ" ըլլալու համար նշանակութիւն ունենալու է: Երբեմն բանախօսութեան մը ներկայ կ'ըլլանք ու վերջաւորութեան երբ մեզի հարց տրուի թէ ի՞նչ ըսաւ օրուան բանախօսը, մեզմէ ոմանք կը պատասխանեն, "բառե՛ր և բառե՛ր": Որ ըսել է, առանց իմաստի և նշանակութեան, միայն բառեր:

Ըստ Հր. Աճառեանի, "բառ, բան և խօսք" *փոխանակելի* բառեր են և նոյն փոխաբերութեամբ գործածուած Հայ դպրութեան մէջ: Նոյն իմաստով և նշանակութեամբ սոյն բառերը գործածուած են նաեւ տարբեր լեզուներու մէջ ինչպէս Յուն. (Logos) և Անգ. (Word) "խօսք", "Բան" բառերը որ գործածուած են որպէս "խօսքի նիւթ, առարկայ կամ ըսելիք խօսք" կամ "խօսակցութիւն":

Ի՞նչպէս կարելի է բառերը վերածել "խօսքի" և բունկցնել զանոնք նման վառօդի որ դառնան ուժանակային զօրութիւն: Սոյն երեք փոխանակելի բառերուն յայտնաբերիչ օգտագործութիւնը կախում ունի, այդ բառերուն մեր ներթափանցումի կարողութենէն:

Զինացիներ՝ հնարած էին վառօդը: Սակայն չի ճանչցան անոր զօրութիւնը, կը գործածէին զայն միայն որպէս

հրախաղութիւն: Ձինացիք նոյնպէս յղացած էին կողմնացոյցը, սակայն երկրախաղութեան կամ հետազօտութեան չ'գործածեցին իրենց ժառանգութիւնը ինչպէս Գողմպոս ըրաւ: Ձինացիք՝ նաեւ ստեղծած էին թուղթն ու տպագրական եղանակը, սակայն երբեք տպագրութիւնն ու հրատարակչական զօրութիւնը չ'նախատեսեցին:

Ի՞նչու՝

Որովհետեւ, սոյն երեք, աշխարհը սարսող "բան"-երուն խորքը չ'էին թափանցած: Իրենց ունեցած թանկարժէք մտայղացումները իրենց հոգւոյն խորքը՝ չ'էին ներագրած: Հետեւաբար, երբ ոգեկան ներհայեցողութեամբ ճանչնա՛նք Հայ Լեզուի հիասքա՛նչ բառերը և ընտելանա՛նք անոնց նշանակութեան և իմաստին, այնուհետեւ այդ բառերը նիւթ և գիր ըլլալէ պիտի դադրին, ու պիտի դառնան ոգի՝ և ջո՛ւնչ: Բառերն ու խօսքերը, որոնք աստուածատուր ջնորհ մըն են մարդկային ցեղին, կը զատորոջեն մարդը անասունէն, ուստի՝ գործածենք բառերը խորհրդագրած յարգանքով և մեծարանքով:

Հայերէն լեզուի հարուստ գանձարանը ունի *բառի* և *խօսքի* երկու զանազան բառեր որոնք տարբեր առաւելութիւններ ունեցող երկւորեակ բառեր են: Անգլերէնի մէջ՝ նոյն բառերուն համար կայ միայն մէկ բառ մը՝ որ է (word) :

Երբ մտածում մը *գրաւոր*: կ'արտայայտես՝ արտայայտած կ'ըլլաս միտքդ *բառերով*: Իսկ երբ խորհուրդներդ *բերանացի* կարտայայտես՝ զանոնք արտայայտած կ'ըլլաս *խօսքով*:

Ի՞նչ է տարբերութիւնը *բառի* և *խօսքի*: Հայերս չ'ենք ըստ "պատուոյ *գիր*": այլ կ'ըսենք "պատուոյ *խօսք*": Երբ անձ մը խոստում մը ընէ, ըրած կ'ըլլայ իր *ջուղնովը*: Այդ թո՛հերու մէջէն արտաջնչուած օդը որ խօսքի կը վերածուի, մեր ինքնութեան բջիջներու ոգիովն ու կենդանութեամբ կաղապարուած և իմաստաւորուած խօսք կը դառնայ: Մեր միտքն ու խորհրդածութիւնը բառ մը ըլլալէ կը դադրի, և կը դառնայ իմացական զօրութիւն կրելով մեր հիւլէական ինքնութիւնն ու էութիւնը: Խօսքի այս զօրույթո՛ւ է որ կ'օրհնենք մեր սիրելիներն ու կ'անիծենք մեր թշնամիները: Դատարանի մէջ երբ անձ մը վկայութեան կ'անչուի, նախ, բերանացի--խօսքով--երդում կ'ընէ ընդհանուրին առջեւ թէ իր խօսքերը ճշմարիտ են: Մարդիկ՝ *գրաւոր* երդում չ'են ըներ: Կրնան իրենց բերանացի երդումը գրաւոր ներկայացնել:

Երգագրութեան և բանաստեղծական բառերուն *աշխույժական* իմաստն ու զօրութիւնը կը յայտնագործուի ասմունքական և

երածջտական եղանակներով: Ոտանաւոր մը որ միայն գիր ու բառ է գիրքի մը մէջ, կրնայ միայն գրական և բանասիրական արժեքներկայացնել: Երբ այդ նոյն ոտանաւորը արտասանուի ոգեջունչ և խանդավառող բանասերի մը կողմէ, բոլոր ունկնդիրները ռոմֆի կ'ելլեն ծափահարութեամբ ու գնահատանքով: Ի՞նչ ուժ կը ներկայացնէ Ֆրանսական ֆայլերգը երբ միայն թուղթի վրայ նօթագրուած է: Իսկ՝ երբ Ֆրանսական բանակը երգէ նոյն ֆայլերգը, համայն Ֆրանսա կը շարժի:

Չինական հրախառի վառօդը երբ զենքի՛ գօրութեան վերածուեցաւ, ազգաց ռազմավարութիւնը փոխուեցաւ: Զաններորդ դարու վառօդային զենքը երբ հիւլէական ռումքի վերածուեցաւ, փոխակերպեց մերօրեայ ռազմավարութեան եղանակը:

Ինչպէս բառ մը *խօսքի* փոխուելով ոգի և ուժ կը դառնայ, նոյնպէս ալ խօսքը երբ *ապրուս* և *կեանք* դառնայ հիւլէական գօրութիւն կ'ստանայ:

Հռոմայեցի օրինազէտ Կիկերո, Ռուս Լեւ Թոլստոյ և Ֆրանսացի Վիկտոր Հիւկօ՝ խօսքի վարպետներ էին: Այս ճարտասան անձերու գրութիւններն ու խօսքերը յուզեցին բազմութիւններ և ժողովուրդներ, սակայն մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի հոգեջունչ և հոգեջարժ խօսքերը, ոչ միայն յուզեցին բազմութեան սրտերը, այլ՝ սարսեցին աշխարհի ֆաղափակքթութիւնը, մարդկային իմաստասիրական ըմբռնումները, բարոյականի և նկարագրի մտածելակերպը: Մարդկային ինֆորմոզումի այս ամբողջական կերպարանափոխումը, Յիսուս կոչեց "վերստին ծնանիլ", որ կը շարունակէ քսան դարերէ ի վեր ու պիտի շարունակէ՛ մինչեւ Գալուստը Աստուծոյ Թագաւորութեան:

Բառը վերածուեցաւ խօսքի գօրութեան երբ մարդիկ իրենց անձնաւորութիւնը և ջունչը դրին յայտնաբերելու բառին իսկական նշանակութիւնը: Յիսուս Զրիստոս՝ Իր կեանքը՝ դրաւ Իր ասմունքած խօսքերուն ետին: *"Իշխանութիւն ու նիս կեանքս տալու և իշխանութիւն ու նիս վերստին զայն առնելու"* Կը վկայէ Յիսուս Յովհաննու Ժ. գլխուն և 18րդ համարին մէջ: Անձնուիրաբար և գերագոյն զոհողութեամբ՝ Յիսուս խոստացաւ կատարել Իր *սիրոյ* անձնատուութիւնը քեզի և ինձի համար՝ ըսելով չօրը, "Ոչ թէ ի՛մ կամքս, այլ քո՛ կամքդ թող ըլլայ" Դուկ. ԻԲ.42:

Սիրոյ այս ծայրագոյն զոհողութեան առջեւ՝ ու՞ր կը գտնուի "Եկեղեցին Հայկականը":

"Եկեղեցին Հայկական"ի գօրոյթը, Իր Հաւատամքի գիրին և վարդապետութեան մէջ չէ՛: Ոգեջնչող աղօթքները 'Նարեկացիին՝

անոր տառերուն մէջ չեն, այլ այդ աղօթներուն անձնատուութեան հոգիին մէջն են: Ա. Ճարականներու երկնաւաց և երկնառաք գօրութիւնը անոնց գիրին մէջ չէ՛, այլ՝ անոնց փրկարար հոգեփոխութեան և կենսանորոգ շարժման մէջն է: Միրոյ զոհաբերութեան պարտութիւնը՝ յախտենական յաղթութեան ակնադքիւրը դարձած է անհամար վկաներու և մարտիրոսներու:

Բասներորդ դարու, մարդապաշտ և հեշտամոլ Բաղաբակրթութիւն ճանչցուած բարոյական արժեքները, նորածին Բրիստոնեային մկրտութիւնն ու դրոջմուած հաւատքը չեն գօրացներ այլ կ'այլաւերեն: Հաւատացեալ ծնողք մը փոխանակ կերուխումով և պարով տօնելու այդ մկրտութիւնը, պարտաւոր է իր հոգիով և ներշնչումներով հասկցնել ու բացատրել իր զակին: Յիսուս Բրիստոս և Իր Աւետարանը՝ փոխանակ գիր մը, արարողութիւն մը և աճիւն մը ըլլալու իր զակին, պէտք է դառնայ խօսուն ջո՛ւնչ և ոգի:

Հայ ազգը ծննդագործեց և դիեցուց Նարեկացիներ և Ծնորհալիներ, Խորենացիներ ու Խրիմեան Հայրիկներ ոչ թէ գիրով և խօսքով միայն, այլ՝ անոնց ապրումովը, զոհողութեամբը և արիւնովը: Եկեղեցին մաքառեցաւ դարեր շարունակ, ընդդէմ խաւարի, ընդդէմ բռնութեան և բարբարոսութեան իր *արիւնաբա՛ւ* նուիրումով:

*Այ՛ս է բառին, բանին և խօսքին կառարը  
և կենսաբաշխ գօրութիւնը:*

**Սեպտ. 16, 1989**  
**Թորոնթօ**